ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

04.09.2019թ. ԿՆՔՎԱԾ N «ՀՀ ԿՄ-ՀՀ-ԳՀԱՇՁԲ-19/01» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Հացավան 20 նոյեմբերի 2019թ.

ՀՀ Կոտայքի մարզի Հացավանի համայնքապետարանը, ի դեմս ղեկավար Շավարշ Սարգսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԱՐԶԱՆԴ» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Յու. Մարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 04.09.2019թ. կնքված N **«ՀՀ ԿՄ-ՀՀ-ԳՀԱՇՁԲ-19/01»** ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 8.5 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Համաձայն ՀՀ գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Հացավան համայնքի մշակույթի տան վերանորոգման աշխատանքների համար կրկին նախատեսվել է ֆինանսական միջոց ևս 575600 (հինգ հարյուր յոթանասունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամի չափով:

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը **որոշեցին**

1.1 Հաստատել պայմանագրի ծավալաթերթ – նախահաշիվին կից ծավալաթերթ-նախահաշիվ նախատեսված նոր ֆինանսական միջոցներին համապատասխան՝ համաձայն հավելված N 1-ի /կցվում է/:

1.2 Պայմանագրի N 2 հավելվածը՝ աշխատանքների կատարման ժամկետների օրացույցային գրաֆիկը, փոխարինել Համաձայնագրի N 2 հավելվածով /կցվում է/:

1.3 Հաստատել Պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N3-ի /կցվում է/:

2. Այլ պայմաններ

2.1. 04.09.2019թ. կնքված N **«ՀՀ ԿՄ-ՀՀ-ԳՀԱՇՁԲ-19/01»** ծածկագրով **ՀՀ Կոտայքի մարզի Հացավանի համայնքապետարանի կարիքների համար Հացավան համայնքի մշակույթի տան վերանորոգման աշխատանքների** ձեռքբերման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հացավանի համայնքապետարան **ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հացավան, 1-ին փ, 2 շ.** **Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** **Հ/Հ 900102382034, 900102000677** **ՀՎՀՀ 03502795** **Ղեկավար՝ Շ. Սարգսյան** /ստորագրություն/	**«ՄԱՐԶԱՆԴ» ՍՊԸ** **ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Գեղաձոր** **Բանկը՝ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ** **Հ/Հ 22042559010000** **ՀՎՀՀ 05012047** **Տնօրեն՝ Յու. Մարգարյան** /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 3

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի

մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ Կոտայքի մարզի Հացավանի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Հացավան համայնքի մշակույթի տան վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԿՄ-ՀՀ-ԳՀԱՇՁԲ-19/01 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի սեպտեմբերի 4-ին կնքված N ՀՀ ԿՄ-ՀՀ-ԳՀԱՇՁԲ-19/01 պայմանագրում 2019 թվականի նոյեմբերի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառը՝ **Գնման պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նորից նախատեսվել և հաստատվել են ևս ֆինանսական միջոցներ:**

Փոփոխության նկարագրությունը՝ **Կնքվել է համաձայնագիր, որով դրվել է նոր նախատեսված ֆինանսական միջոցներին համապատասխան աշխատանքների սկիզբը և հստակեցվել է վճարման ժամանակացույցը**

Փոփոխության հիմնավորում՝ 2019թ-ի սեպտեմբերի 4-ին կնքված պայմանագրի 8.5 և 8.13 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ Կոտայքի մարզի Հացավանի համայնքապետարան*